**Ընդգծի՛ր տրված նախադասության ենթական:**

Փոքրիկ լճերը գեղեցկացնում են դաշտավայրը:

**Համառոտի՛ր նախադասությունը՝ թողնելով միայն գլխավոր անդամները:**

Փոքրիկ աղջիկը իր ընկերուհիների հետ խաղում էր բակում:

Աղջիկը խաղում էր:

**Ինչպիսի՞ն է տրված նախադասությունը ըստ երանգի:**

Արի՛, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն:

Բացականչական

**Կետադրի՛ր տրված նախադասությունները:**

Մայրիկն աղջկան ասաց.

Լիլի՛թ, գնա այգի և հավաքիր այն տերևները, որոնք արդեն դեղնել են, բայց չեն չորացել:

Հայրն ասաց որդուն.

Որդի՛ս, ինչո՞վ կլցնես այս շտեմարանը, որ ամենակարևոր բանը լինի աշխարհում:

**Ուղղի՛ր նախադասության մեջ առկա սխալը:**

Նա շատ էր սիրում իր աճեցրած ծաղիկները:

**Ճիշտ դասավորի՛ր բառերը և կարդա՛ նախադասությունները:**

Արևը քաշեց ծիլերը հողից:

Երփներանգ ծաղիկները բուրում էին դաշտում:

Աստղերը գիշերային երկնքում պսպղում էին:

**Շարունակի՛ր տրված նախադասությունները:**

Աստղերը աղոտանում են, երբ ծագում է արևը:

Երբ մեծանամ, խոհարար եմ դառնալու:

Բոլոր մարդիկ ցանկանում են, որ աշխարհի վերջը չլինի:

Պապը թոռնիկին խոստացավ, որ ձկնորսության կտանի:

**Տրված նախադասություններում, ո՞ր բառակապակցությունն է դարձվածք:**

Փողոցում մեքենաներն այնքան շատ էին, որ **ասեղ գցելու տեղ չկար**:

Բոլոր երեխաներին ցանկանում ենք **անամպ երկինք** և երջանիկ մանկություն:

Ծաղիկների **անուշ բույրը** տարածվել էր դաշտով մեկ:

Գարնանը ամբողջ բնությունը **արթնանում է քնից:**